«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«05» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ-42/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լիլանարմ» ՍՊԸ-ի 27.11.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզվել է հետևյալը.

1. «Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 27.11.2014թ. ներկայացրած բողոքով «Լիլանարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) նշել է, որ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-14/10» ծածկագրով

բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2014թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, մինչդեռ՝ Ընկերությունը հայտը ներկայացրել է հրավերով սահմանված կարգով:

«Լիլանարմ» ՍՊԸ-ն բողոքում նշել է, որ ներկայացված գնային առաջարկում եղել է թվաբանական անհամապատասխանություն, որի դեպքում Պատվիրատուն՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 49.1-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետք է կատարեր սխալների ուղղում և նույն կետի 4-րդ ենթակետի՝ կատարած ուղղումների արդյունքների մասին 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցեր մասնակցին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պատվիրատուն խախտել է Կարգով սահմանված 49.1-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի պահանջները, քանի որ գնահատող հանձնաժողովը չի կատարել սխալների ուղղում և Ընկերությանը չի ծանուցել կատարված ուղղումների մասին:

«Լիլանարմ» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի 19.11.2014թ. թիվ 3 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը 01.12.2014թ. դիմում է ներկայացրել Կենտրոնին՝ խնդրելով «Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացրած 27.11.2014թ բողոքը թողնել առանց քննության:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-42/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 03.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

<u>2. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն Ընկերության բողոքի վերաբերյալ 02.12.2014թ. ՀՍ/1-940-14 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-14/10» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիլանարմ» ՍՊԸ-ն:

Ընկերության ներկայացրած հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է գնային առաջարկի սխալ հաշվարկի հետևանքով, մասնավորապես «Լիլանարմ» ՍՊԸ-ի գնային առաջարկի (N 3 հավելված) 5-րդ սյունյակում տառերով և թվերով ներկայացված առաջարկված գինը՝ 392.000.000 ՀՀ դրամը չի համապատասխանել արժեքի (326.666.666) և ԱԱՀ-ի (65.333.333) հանրագումարին, որը պետք է լիներ 391.999.999 ՀՀ դրամ:

Պատվիրատուն նշել է նաև, որ այդ հարցի կապակցությամբ պարզաբանում է տվել ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ պետական կառավարման մարմինների աշխատակազմերին ուղղված շրջաբերական գրությամբ: Նշված գրության համաձայն՝ գնի առաջարկի դեպքում մասնակցի հայտի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատվում է հիմք ընդունելով տառերով նշված գումարը և եթե գնային առաջարկի բաղադրիչների՝ արժեքի և ԱԱՀ-ի հաշվարկի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված թվին, ապա հայտը գնահատվում է անբավարար:

Պատվիրատուն գտնում է, որ եթե գնի առաջարկում հաշվարկը կատարվել է սխալ և հաշվարկի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված թվին, ապա հայտը ենթակա է մերժման:

<u>3. ԳԲԽ-42/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լիլանարմ» ՍՊԸ-ի 27.11.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Ընկերության 01.12.2014թ. դիմումը, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի 02.12.2014թ. ՀՍ/1-940-14 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-42/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-14/10» ծածկագրով բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածի՝ գնի առաջարկի 5-րդ սյունյակում Ընկերության կողմից տառերով և թվերով ներկայացված առաջարկված գինը՝ 392.000.000 ՀՀ դրամը, չի համապատասխանել 3-րդ և 4-րդ սյունյակների՝ «արժեք» (326.666.666) և «ԱԱՀ» (65.333.333) հանրագումարին, ինչը կազմում է 391.999.999 ՀՀ դրամ, այլ ոչ թե 392.000.000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության 3.1 կետով որոշում է կայացվել «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

4. ԳԲԽ-42/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումը և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 49.1-րդ կետի համաձայն. «...Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը.

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Կարգի 49.1-րդ կետի վերոնշյալ ենթակետերում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ այդ նորմերը վերաբերում են գնային առաջարկում առկա թվային և բառային արտահայտությունների միջև անհամապատասխանությանը, մինչդեռ՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի 5-րդ սյունյակում սահմանված գինը՝ տառերով և թվերով արտահայտված, համապատասխանում են միմյանց:

Նկատի ունենալով, որ գնահատող հանձնաժողովի 11.11.2014թ. N 5 արձանագրության 3.1 կետով կայացրած որոշմամբ չեն խախտվել Կարգի 49.1-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված պահանջները, ինչպես նաև այն, որ Ընկերությունը 01.12.2014թ. դիմումով խնդրել է իր ներկայացրած բողոքը թողնել առանց քննության, ուստի առաջարկում ենք «Լիլանարմ» ՍՊԸ-ի 27.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-42/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Մկրտչյան